ՍՄԿԿ XXIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ա. Զ. ԲԵԳՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր

Աշխատավորների դեպուտատների սովետները հանդիսանում են ամենամասսայական, իսկական դեմոկրատական կազմակերպություններ, մեր համաժողովրդական սոցիալիստական պետության քաղաքական հիմքը, բնակչությանն առավել մոտ կանգնած մարմիններ։ Պաշտոնական տվյալների համաձայն՝ ներկայումս երկրում հաշվվում են 49.709 երկրամասային, մարզային, օկրուգային, շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, գյուղական և ավանային սովետներ։ Նրանց կազմում ընտրված են 2.165.152 դեպուտատներ։ Հայաստանում համապատասխանաբար կան՝ 34 շրջանային, 23 քաղաքային, Երևան քաղաքի 6 շրջանային, 462 գյուղական, 30 ավանային աշխատավորների դեպուտատների սովետներ՝ 25. 459 դեպուտատներով։

1970 թ. վերջում ՍՍՀՄ-ում աշխատավորների դեպուտատների սովետներում գործել են 324.346 մշտական հանձնաժողովներ։ Դրանցում աշխատել են 1.679.172 դեպուտատներ և ավելի քան 2,7 միլիոն ակտիվիստներ. Հայկական ՍՍՀ-ում, համապատասխանաբար կային՝ 3,818 մշտական հանձնաժողովներ, որոնցում աշխատել են 18.983 դեպուտատներ և 16.047 ակտիվիստներ։ Հենց միայն այս բնորոշում է սովետների արտակարգ մեծ տեղը մեր ամբողջ համաժողովրդական սոցիալիստական պետության սիստեմում և յուրաքանչյուր միութենական հանրապետությունում։

Սովետները, որ մշտապես գտնվել են կոմունիստական կուսակցության, նրա Կենտրոնական կոմիտեի և սովետական պետության ուշադրության կենտրոնում, մեր պետական, տնտեսական և կուլտուրական շինարարության հաջողությունների գլխավոր գրավականն են։ «Մենք համոզված ենք,—ասել է Վ. Ի. Լենինը 1922 թ.՝ ՀԿԳԿ 4-րդ սեսիայում,—որ եթե մեր հեղափոխությունը հասել է ներկա հաջողություններին, ապա այդ նրանից է, որ մենք միշտ մեր ամենագլխավոր ուշադրությունը նվիրաբերել ենք տեղական իշխանություններին, հենց իրենց՝ տեղերի փորձին»[1]։

Սովետների գործունեության փորձի ընդհանրացման, սովետական պետության կյանքում նրանց դերի ու տեղի բարձրացման խնդիրները հանդիսացել են կոմունիստական կուսակցության հատուկ հոգատարության առարկան՝ Սովետական պետության գոյության ողջ ժամանակաշրջանի ընթացքում։

Սովետական շինարարության բնագավառում կուսակցության գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարության ղեկավարման մեջ սովետների դերի հետագա բարձրա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 467։

ցումն է։ Սովետների դերի բարձրացման գաղափարը առավել զարգացում է ստացել ՍՄԿԿ վերջին՝ XXIII և XXIV համագումարների որոշումներում։

ՍՄԿԿ XXIII համագումարը նշել է, որ սովետական պետության հետագա ամրապնդման և սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման կապակցությամբ հատուկ նշանակություն է ստանում աշխատավորների դեպուտատների սովետների դերի բարձրացումը, այն առումով, որ նրանք լրիվ ծավալով կատարեն իրենց իրավազորությունները՝ կառավարման, տնտեսության և կուլտուրայի բնագավառներում, հանդես բերեն առավելագույն նախաձեռնություն պլանային, ֆինանսական, հողային հարցերի լուծման, տեղական արդյունաբերության ղեկավարման, բնակչության սոցիալ-կուլտուրական և կենցաղային սպասարկման գործում։

ՍՄԿԿ-ն և Սովետական պետությունը ընդունել են սովետների աշխատանքի մակարդակը բարձրացնող մի շարք նոր միջոցառումներ, մասնավորապես ՍՄԿԿ ԿԿ-ի «Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային սովետների աշխատանքի բարելավման մասին» 1967 թ. մարտյան որոշումը և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1968 թ. ապրիլի 8-ի «Աշխատավորների դեպուտատների գյուղական և ավանային սովետների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» հրամանագիրը։

Անդրադառնալով սովետների դերին՝ «Պրավդան» գրել է. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել գյուղական և ավանային սովետների աշխատանքի բարելավմանն այն հաշվով, որպեսզի նա մեծ ներգործություն ցույց տա տընտեսական և սոցիալ-կուլտուրական խնդիրների լուծման վրա։ Սովետի սեսիաների քննարկմանը պետք է մտցնել առավել էական հարցեր, բարձրացնել մշտական հանձնաժողովների դերը, ակտիվացնել դեպուտատների աշխատանքը սովետներում և ընտրական օկրուգներում, ընդլայնել սովետների կապը աշխատավոր մասսաների հետ։ Գյուղական և ավանային սովետների գործկոմները պետք է ուժեղացնեն հրապարակայնությունը սովետի աշխատանքում, գյուղի և ավանի կյանքին վերաբերող կարևորագույն հարցերը ներկայացնեն քաղաքացիների քննարկմանը, սովետի կամ նրա գործադիր կոմիտեի ընդունած որոշումները հասցնեն բնակչությանը, այդ որոշումների կատարման ուղղությամբ ծավալեն կազմակերպական լայն աշխատանք։ Անհրաժեշտ է առավել լայնորեն ընդհանրացնել և տարածել գյուղական և ավանային սովետների աշխատանքի փորձը և աշխատավորների դեպուտատների շրջանային, մարզային և երկրամասային սովետների գործկոմների ղեկավարությունը[2]։

Կենտրոնական կոմիտեի վերոհիշյալ որոշման կատարմանն էին ուղղված դիտական և կազմակերպական մի շարք միջոցառումներ։ Իրավաբանական գիտական հիմնարկությունները ակտիվ մասնակցություն են ունեցել սովետների և կառավարման մարմինների կազմակերպման, նրանց գործունեության ուսումնասիրության և այդ պրոբլեմների գծով հանձնարարականների մշակման գործում։ Այսպիսի ուսումնասիրություն կատարվեց 1968 թ. գարնանը՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պետության և Իրավունքի ինստիտուտի, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի իրավունքի բաժնի և Երևանի պետական համալսարանի իրա-

2 См. «Правда», 11. 5. 1967.

վարանական ֆակուլտետի գիտաշխատողների կողմից։ Անցկացվեց գիտա-գործնական կոնֆերանս՝ Հայկական ՍՍՀ սովետների և պետական կառավարման մարմինների կազմակերպման ու գործունեության կատարելագործման պրոբլեմների վերաբերյալ, որտեղ ընդունվել են հանձնարարականներ և առաջարկություններ տեղական սովետների կազմակերպման ու գործունեության կատարելագործման հարցերի, պետական կառավարման արդյունավետության պրոբլեմների, սովետական շինարարության և գիտական հետազոտությունների զարգացման հարցերի վերաբերյալ։ Այդ հանձնարարականների զգալի մասը իրականացվել է՝ տալով դրական արդյունքներ։

Միութենական հանրապետություններում մեծ աշխատանք է կատարվել սովետների բոլոր օղակների գործունեության վերաբերյալ օրենքների մշակման ուղղությամբ։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը հանրապետության Մինիստրների սովետի նախագահ Բ. Հ. Մուրադյանի «ՍՄԿԿ XXIII համագումարի որոշումների լույսի տակ աշխատավորների դեպուտատների տեղական սովետների աշխատանքի հետագա բարելավման մասին» զեկուցման առթիվ ընդունած որոշմամբ հանձնարարեց ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը՝ մշակել և հաստատման ներկայացնել աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային, շրջանային և քաղաքային սովետների մասին օրենքի նախագիծ։ 1969 թ. դեկտեմբերի 20-ին հանրապետության Գերագույն սովետը ընդունեց Հայկական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային սովետների մասին օրենք (և ոչ թե կանոնադրություն, ինչպես եղել է դա նախկինում)։ Այդ օրենքը հսկայական դրական դեր խաղաց սովետների աշխատանքի բարելավման ուղղությամբ։

Իրականացնելով Կենտրոնական կոմիտեի որոշումները, Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը և Հայկական ՍՍՀ աշխատավորների դեպուտատների գյուղական, ավանային սովետի մասին օրենքը, հանրապետության գյուղական և ավանային սովետները մեծապես բարելավել են իրենց աշխատանքը։ Ընդլայնվել է նրանց կապն աշխատավորության հետ, բարձրացել է մշտական հանձնաժողովների դերը, ակտիվացել դեպուտատների գործունեությունը սովետում և ընտրական օկրուգներում, կարգավորվել և պարբերաբար անց են կացվել դեպուտատների հաշվետվություններ իրենց և սովետի աշխատանքների մասին։

Սովետների շատ գործկոմներ և նրանց բաժիններ սկսել են առավել լրիվ օգտագործել իրենց իրավունքները տնտեսական շինարարությունում, ցուցաբերել գործնական նախաձեռնություն պլանային, ֆինանսական, հողային հարցերը լուծելիս, տեղական արդյունաբերության ղեկավարության մեջ, բարձր պահանջներ ներկայացնել ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին։

Կուսակցության Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ՍՄԿԿ XXIV համագումարի բանաձևում բարձր գնահատվեցին սովետների հաջողությունները տնտեսական, կուլտուրական խնդիրների իրականացման ասպարեզում և նրանց առջև դրվեցին նոր, պատասխանատու խնդիրներ՝ կապված սովետական շինարարության արմատական պրոբլեմների լուծման և սովետների աշխատանքի մակարդակի է՛լ ավելի բարձրացման հետ։ Այդ կապակցությամբ համագումարը կոչ արեց սովետներին լայնորեն օգտագործել տնտեսական շինարարության խնդիրների լուծման գործում իրենց վերապահված իրավունք-

ները, ազդել ժողովրդական բարեկեցության վերելքի վրա, հաստատակամորեն դրաղվել բնակչության սոցիալ-կենցաղային սպասարկման, հասարակական կարգի պահպանման հարցերով։ Համագումարը նշեց ներկայացուցչական մարմիններին գործադիր-կարգադրիչ մարմինների ենթակայության սկզբունքի առավել հետևողական անցկացման անհրաժեշտության, դեպուտատների հեղինակության և ակտիվության բարձրացման մասին։ Այս առումով համագումարը նպատակահարմար գտավ օրենսդրական կարգով սահմանել սովետների դեպուտատների լիազորություններն ու իրավունքները, ինչպես նաև նրանց հանդեպ պաշտոնատար անձանց պարտականությունները։

Կուսակցության XXIV համագումարին ՍՄԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ առաջադրված խնդիրների կենսագործման նպատակն են հետապնդում ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի 1971 թ. մարտի 5-ի «Աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային սովետների աշխատանքի բարելավման մասին» որոշումը և նրա հիման վրա հրապարակված ՍՍՀՄ Գերագույն սովետի 1971 թ. մարտի 19-ի «Աշխատավորների դեպուտատների շրջանային սովետների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» և «Աշխատավորների դեպուտատների քաղաքային և քաղաքի շրջանային սովետների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» հրամանագրերը, ինչպես նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետի 1971 թ. մարտին ընդունած «Աշխատավորների դեպուտատների շրջանային և քաղաքային սովետների գործկոմների նյութա-ֆինանսական բազան ամրապնդելու միջոցառումների մասին» որոշումը։

Նշելով սովետների աշխատանքի բարելավումը, նրանց ձեռք բերած դրական արդյունքները, Կենտրոնական կոմիտեն բացահայտեց սովետների աշխատանքի թերությունները, չլուծված պրոբլեմները և մատնանշեց դրանց հաղթահարման կոնկրետ ուղիները։ Մասնավորապես նշվեց, որ սովետները դեռևս անբավարար են օգտագործում իրենց իրավունքներն ու հնարավորությունները տնտեսական շինարարության, սոցիալ-կուլտուրական և կենցաղային նշանակության օբյեկտների շինարարության, ժողովրդական սպառման առարկաների արտադրության, բնակչության սպասարկման բարելավման գործում։ Անդրադառնալով կազմակերպական աշխատանքներին, Կենտկոմը նշեց, որ տեղական արդյունաբերության, կենցաղային սպասարկման կոմունալ տնտեսության, առևտրի ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների նշանակալի մասը, որոնք տեղավորված են շրջանների և քաղաքների տերիտորիայում և առավելապես սպասարկում են շրջանի և քաղաքի բնակչությանը, շրջանի և քաղաքի սովետների ենթակայության մեջ չեն, իսկ դա թուլացնում է պատասխանատվությունը և սահմանափակում նախաձեռնությունը տեղական տնտեսության զարգացման, բնակչության սպասարկման բարելավման հարցերի լուծման գործում։ Ուստի հատուկ որոշմամբ նախատեսվեց տեղական սովետներին հանձնել շրջանային և քաղաքային ենթակայության այն ձեռնարկությունները, կազմակերպությունները և հիմնարկությունները, որոնք գլխավորապես սպասարկում են տվյալ շրջանի ու քաղաքի բնակչությանը, գերատեսչական բնակֆոնդի և կոմունալ տնտեսության օբյեկտները, ինչպես նաև նրանց բյուջեին հատկացնել հանրապետական ենթակայության ձեռնարկությունների և տնտեսական կազմակերպությունների շահույթի մի մասը։

Տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարության մեջ տեղական սո-

վետների իրավունքները զգալիորեն ընդլայնելով և նրանց նյութա-ֆինանսական բազան ամրապնդելով, կուսակցությունը նոր, առավել բարձր պահանջներ է առաջադրում շրջանային և քաղաքային սովետներին։ Նրանց առաջարկված է առաջին հերթին ակտիվացնել իրենց ենթակայության բնակարանային, կոմունալ շինարարության ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների, սոցիալ-կուլտուրական և կենցաղային նշանակության օբյեկտների գործունեությունը, կոորդինացնել հատկապես ժողովրդական սպառման ապրանքների արտադրության ընդլայնումը։

ՍՄԿԿ Կենտկոմը շրջանային սովետների առջև դնում է այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսին են գյուղատնտեսության զարգացումը, հողահանդերի պահպանության և օգտագործման բարելավումը, աշխատանքի արտադրողականության զգալի աճը և գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, գյուղատնտեսական մթերքների մթերումների առաջադրանքների կատարման վրա հսկողության իրականացումը և այլն։ Միաժամանակ հատուկ ուշադրություն է հրավիրվում սովետների աշխատանքի հրապարակայնության հետագա ապահովման անհրաժեշտության վրա. յուրաքանչյուր շրջանի և քաղաքի ընտրողները պետք է տեղյակ լինեն սովետի բոլոր պրակտիկ գործերին, ակտիվ մասնակցություն ցույց տան անցկացվող միջոցառումներին։ Որպես գործնական խնդիր պահանջվում է շրջանների և քաղաքների կյանքի կարևորագույն հարցերը ներկայացնել աշխատավորների քննությանն՝ ըստ նրանց աշխատավայրի և բնակավայրի։

Սովետների առջև դրված խնդիրների կատարման երաշխիքն ու գլխավոր պայմանը կուսակցական ղեկավարությունն է։ Ղեկավարվելով ՍՄԿԿ XXIV համագումարի և Կենտկոմի որոշումներով, միութենական հանրապետությունների կուսակցական կազմակերպությունները, մարզային, շրջանային կոմիտեները և սկզբնական կուսակցական կազմակերպությունները, իրենց պլենումներում և ժողովներում քննարկել են սովետների աշխատանքի հարցը՝ ձգտելով հասնել նրանց գործունեության բարելավմանը, սովետների նկատմամբ կուսակցական ղեկավարության փորձի կատարելագործմանը։

Նորը, սկզբունքորեն կարևորը, շրջանային և քաղաքային սովետների ստատուսում նրանց լիազորությունների ուժեղացումն է։ Նախկինում նրանք իրավունք չունեին ձեռնարկությունների և կազմակերպությունների ղեկավարներին պարտադրելու կատարել սովետների վարմանը հանձնված մինչև անգամ մի շարք կարևորագույն որոշումներ։ Այժմ այդ հարցում նրանց իրավունքները որոշակի են։ Մասնավորապես դրանց են նվիրված ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության «Աշխատավորների դեպուտատների շրջանային սովետների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» հրամանագրի 5-րդ և «Աշխատավորների դեպուտատների քաղաքային և քաղաքների շրջանային սովետների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին» հրամանագրի 15-րդ հոդվածները։ Դրանք սահմանում են, որ սովետի և նրա գործադիր կոմիտեի այն որոշումները և կարգադրությունները, որոնք ընդունված են իրենց վերապահված իրավունքների սահմաններում, պարտադիր են այն բոլոր ձեռնարկությունների (ներառյալ կոլտնտեսությունների և սովխոզների), հիմնարկությունների, կազմակերպությունների և նրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիների համար, որոնք գտնվում են շրջանի, քաղաքի տերիտորիայում։

Աշխատավորների դեպուտատների շրջանային սովետի մասին օրինակելի կանոնադրության 37-րդ հոդվածը և աշխատավորների դեպուտատների քաղաքային, քաղաքի շրջանային սովետի մասին օրինակելի կանոնադրության 38-րդ հոդվածը պարտավորեցնում են ձեռնարկությունների, հիմնարկությունների և վերադաս ենթակայության կազմակերպությունների ղեկավարներին ոչ ուշ քան տասը օրվա ընթացքում քննարկել շրջանային և քաղաքային սովետների որոշումներով արվող առաջարկությունները և հանձնարարություններ՝ նրանց տերիտորիայում գտնվող ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների մասին և արդյունքները հայտնել համապատասխան սովետին։

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը, հավանություն տալով սովետների մասին օրինակելի կանոնադրությանը, երաշխավորել է միութենական հանրապետությունների Գերագույն սովետների նախագահություններին տեղական պայմանների հաշվառումով մշակել և Գերագույն սովետների քննարկմանը մատնել աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային և քաղաքների շրջանային սովետների մասին օրենքների նախագծեր։ Միութենական հանրապետությունների Գերագույն սովետները 1971 թ. հուլիսին ընդունեցին աշխատավորների դեպուտատների շրջանային, քաղաքային և քաղաքների շրջանային սովետների մասին օրենքներ։ Այդպիսի օրենքներ է ընդունել նաև Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի 8-րդ գումարման առաջին սեսիան՝ 1971 թ. հուլիսի 14-ին։

XXIV համագումարին տրված Կենտկոմի հաշվետվության մեջ նշվել են արտադրական ուժերի զարգացմամբ տնտեսության կառավարման կառուցվածքի կատարելագործման և առանձին մարմինների դերի ճշտման հարցերը, որոնք հավասար չափով վերաբերում են ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մարմիններին՝ մասնավորապես շրջանային և քաղաքային սովետներին։

Տեղական սովետների գործկոմների աշխատանքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք միշտ չէ, որ հստակ են պատկերացնում իրենց իրավասության սահմանները, լիազորությունները և որ նրանց աշխատանքում երբեմն չկա համապատասխան համաձայնեցվածություն։ Քանի որ բաժինների իրավունքները և պարտականությունները չեն ամրապնդված հատուկ կանոնադրությամբ, նրանց ղեկավարները գործկոմ են մտցնում այնպիսի հարցեր, որոնք ըստ էության վերաբերվում են բաժինների իրավասությանը։ Դա ծանրաբեռնում է գործկոմների օրակարգը, թուլացնում իրականում նրանց վերապահված հարցերի խորը քննարկման և լուծման հնարավորությունը։ Հասել է ժամանակը, որ նորմատիվ ակտում հստակ ու պարզ որոշվի, թե ինչպիսի հարցեր են քննարկում և լուծում գործկոմները և նրանց բաժինները։ Ըստ որում հարկավոր է ոչ թե սահմանափակել սովետների բաժինների իրավասությանը վերաբերող հարցերի քննարկումը, այլ, հարցերի մի մասը, որոնք քննարկվում են գործկոմներում, հանձնել համապատասխան բաժինների տնօրինությանը։

ՍՍՀՄ Մինիստրների սովետը «Շրջանային և քաղաքային սովետների գործկոմների նյութա-ֆինանսական բազան ամրապնդելու միջոցների մասին»

---

3 Տե՛ս «Սովետական սոցիալիստական հանրապետությունների միության Գերագույն սովետի տեղեկագիր», 1971, № 12։

որոշմամբ հանձնարարել է միութենական հանրապետությունների Մինիստրների սովետներին միջոցառումներ անցկացնել շրջանային և քաղաքային կառավարման ապարատի կատարելագործման վերաբերյալ, մշակել նորմեր, որոնք որոշեն շրջանային և քաղաքային սովետների գործկոմների ապարատի կառուցվածքը, հաստատել նրանց իրավական ստատուսը և իրավասությունը որոշող կանոնագրությունը։ Արդեն անցկացվող այդ միջոցառումները կբարձրացնեն տեղական սովետների կառավարչական գործունեության կուլտուրան, ոիթմը և արդյունավետությունը։

ՍՄԿԿ XXIV համագումարը հատուկ ուշադրություն դարձրեց սովետների դեպուտատների դերին։ Նրանց արդյունավետ աշխատանքի համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները։ Նրանք օժտված են մեծ իրավունքներով։ Օրինակ՝ դեպուտատները կարող են սովետի, նրա գործկոմի և մշտական հանձնաժողովների քննարկմանը մտցնել առաջարկություններ՝ դեպուտատական գործունեության ընթացքում ծագած հարցերի շուրջը, գործկոմի սեսիայում կատարել հարցումներ՝ նրա բաժինների և վարչությունների ղեկավարներին, կոլտնտեսություններին, սովխոզներին, ձեռնարկություններին, հիմնարկություններին և այլ կազմակերպություններին։

Կենտկոմի «Շրջանային և քաղաքային սովետների աշխատանքի հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշման մեջ ընդգծվում է յուրաքանչյուր դեպուտատի ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը հասունացած հարցերը լուծելիս։ «Դեպուտատները պարտավոր են հասնել ընտրողների նակազների կատարմանը,—ասվում է այդ որոշման մեջ,—ինֆորմացիա տալ նրանց այն մասին, թե ինչպես են ընթանում գործերն ընտրական օկրուգում, ինչպիսի դժվարություններ են ծագում տնտեսական և կուլտուրական շինարարությունում, ինչպես են նրանք հաղթահարվում»։ Հայկական ՍՍՀ սովետներում ընտրված 25.459 դեպուտատները ներկայացնում են ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները, հասարակական կյանքի բոլոր ասպարեզները։ Շատ ձեռնարկություններ և կազմակերպություններ գլխավորում են տեղական սովետների դեպուտատ ղեկավարներ։ Դեպուտատներ են շատ արտադրամասերի վարիչներ, ինժեներներ, բրիգադիրներ, ֆերմաների վարիչներ, գյուղատնտեսներ և այլ մասնագետներ։

Կուսակցությունը և սովետների պետությունը մեծ ուշադրություն են դարձնում դեպուտատների գործունեության կատարելագործման վրա։ Նրանց օգնություն է ցույց տրվում ձեռք բերելու անհրաժեշտ իրավաբանական գիտելիքներ, անց են կացվում սեմինարներ և այլ միջոցառումներ՝ նրանց պետական մտահորիզոնի ընդլայնման համար։

Հայկական ՍՍՀ փիլիսոփայության և իրավունքի սեկտորը ՍՍՀՄ ԳԱ պետության և իրավունքի ինստիտուտի աշխատակիցների հետ միասին 1968 թ. դեպուտատական գործունեության արդյունավետության շուրջն անցկացրին Հայկական ՍՍՀ տեղական սովետների դեպուտատների անկետացում։ Հարցման ենթարկվեցին 3.327 դեպուտատներ, ստացված է բավականին նյութ ընդհանրացման և գիտական առաջարկությունների համար։ Հայաստանի տեղական սովետների դեպուտատների գրեթե 30 տոկոսն ունեն բարձրագույն կրթություն, շրջանային սովետների և հանրապետական ենթակայության սովետների կազմում այդպիսի դեպուտատները 50 տոկոսից ավելի են։

Իհարկե, դեպուտատների գործունեության կազմակերպման մեջ քիչ չեն դժվարությունները։ Դեռևս չկա դեպուտատի ստատուսը բնորոշող հատուկ օրենսդրություն։ Դեպուտատների լիազորությունների և իրավունքների մասին խոսվում է սովետների մասին կանոնագրությունում։ Սակայն նախ՝ կանոնագրությունը այս հարցում չի կարելի համարել բավարար և ապա՝ նկատվում է էական տարբերություն դեպուտատներին վերապահված իրավունքների ծավալում, անհամաձայնություն կա նրանց իրավունքների և պարտականությունների բնորոշման մեջ, չեն լուծված նրանց գործունեության մի շարք հարցեր և այլն։ ՍՄԿԿ XXIV համագումարի բանաձևում նշված է այդ ստատուսը որոշող հատուկ օրենսդրության ընդունման անհրաժեշտությունը։

Սովետական մարդիկ մեծ գոհունակությամբ ընդունեցին XXIV համագումարի և ՍՄԿԿ ԿԿ-ի որոշումները սովետների աշխատանքի հետագա բարելավման միջոցառումների մասին։ Նրանց առաջնահերթ խնդիրն է դարձել XXIV համագումարի որոշումների կատարումը, նրա մշակած տնտեսական քաղաքականության իրականացումը։ «Իշխանության տեղական մարմիններ—Մոսկվա քաղաքի Բաումանի ընտրական օկրուգի ընտրողների առաջ 1971 թ. հունիսի 11-ին արտասանած ճառում ասել է ընկեր Լ. Ի. Բրեժնևը,—կոչված են ստանձնելու մեր կուսակցության XXIV համագումարի որոշումների պրակտիկ կատարման աշխատանքի զգալի մասը»։

Համագումարի հնգամյա պլանի դիրեկտիվների հաջող լուծման գործում մեծ անելիք ունեն Հայաստանի աշխատավորների դեպուտատների սովետները։ Հայտնի է, որ եթե ՍՍՀՄ արտադրության ընդհանուր ծավալը հնգամյակի ընթացքում պետք է աճի 42—46 տոկոսով, ապա Հայաստանում այդ աճը պետք է կազմի 60—63 տոկոս։

Աշխատավորների դեպուտատների սովետները ձեռնամուխ լինելով կուսակցության ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների կենսագործմանը, նկատելիորեն ուժեղացրել են իրենց ուշադրությունը էկոնոմիկայի զարգացման նկատմամբ, լայնորեն օգտվում են իրենց նոր իրավունքներից, բարձրացնում են իրենց գործունեության մակարդակը, պետական կառավարման մասնակից են դարձնում ավելի լայն ժողովրդական մասսաներ։

Ղեկավարվելով XXIV համագումարի գաղափարներով և ՍՄԿԿ ԿԿ-ի որոշմամբ՝ շրջանային և քաղաքային սովետների աշխատանքի բարելավման մասին, ընտրողներն իրենց դեպուտատությանթեկնածուներից պահանջել են ակտիվորեն մասնակցել հասունացած բոլոր հարցերի լուծմանը, համարձակ և սկզբունքորեն բացահայտել թերությունները, առաջարկություններ մտցնել սովետների և նրան ենթակա մարմինների գործունեության բարելավման ուղիների մասին։ Ընտրողների նակազներն մեծ սկզբունքային նշանակություն ունեն, դրանք ընտրողների ուղղակի պատվիրանն են իրենց դեպուտատին։ Ինչպես ցույց է տալիս մասնավորապես Հայկական ՍՍՀ պրակտիկան, դրանք վերաբերում են հասարակական կյանքի շատ կողմերին և բնականաբար, զգալի տեղ են գրավում դեպուտատների և սովետի ամբողջ աշխատանքում։ Ընտրողների նակազները դիտելով որպես նրանց կոլեկտիվ կամքի արտահայտություն, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1971 թ. մայիսին, քննարկելով Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ութերորդ գումարման և աշխատավորների դեպուտատների տեղական սովետների XIII գումարման ընտրությունների նախապատրաստման ընթացքը, հանձնարարեց սովետ-

ների գործկոմներին հատուկ ուշադրություն դարձնել ընտրողների նակազներ ընդհանրացման վրա և նախապատրաստել դրանց քննարկումը նոր գումարման սովետներում։

Որոշելով կոմունիստական շինարարության հետագա բնագծերը մեր երկրում ՍՄԿԿ XXIV համագումարը հասարակական գիտությունների աշխատողների առաջ դրեց նոր խնդիրներ, ընդգծեց դիտա-հետազոտական աշխատանքի ակտիվացման անհրաժեշտությունը։ Կուսակցության պատմական համագումարի առաջադրանքների կենսագործմանն ամբողջ գործունեությամբ նպաստելը մեր բոլորի սուրբ պարտքն ու պարտականությունն է։

XXIV СЪЕЗД КПСС И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВЕТСКОГО СТРОИТЕЛЬСТВА

А. З. БЕГЯН

доктор юридических наук

(Резюме)

В осуществлении разработанной XXIV съездом партии программы дальнейшего экономического, политического и культурного прогресса СССР важную роль играют Советы депутатов трудящихся.

В решениях съезда глубоко анализированы все аспекты деятельности Советов, направленные на более полное и эффективное использование Советами своих полномочий.

Руководствуясь решениями съезда и ЦК КПСС, Союзные республики приняли новые законы о районных и городских Советах, которые знаменуют новый этап в развитии и деятельности Советов.